Ո՞Վ Է ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ՁԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Ալեքսանդր Կրասիլո

Նկատի ունեցեք, որ չգիտությունը երբեք չարիք չի պատճառում, միայն մոլորությունն է կործանարար: Իսկ մոլորվում են մարդիկ ոչ թե չգիտենալու, այլ՝ իրենց գիտուն երևակայելու պատճառով:

Ժան-Ժակ Ռուսսո

Տերության ողջ գանձերն անգամ չեն կարող հատուցել նրա աշխատանքը, ով ճշմարտության ճանապարհին քեզ գեթ մի տառ է սովորեցրել:

Ալիշեր Նավոի

«Կողքից մարդուն, ում հոգին հանել են հռչակավոր մաթեմաթիկոս Ն. Ռիբկինի՝ բազում դասագրքերի և խնդիրների ու վարժությունների ժողովածուներ կազմողի ցնորքները, մարդուն, ով զուրկ է ստեղծագործական երևակայությունից, այն րոպեներին տաղտկալի մի «հեծանվորդ այսինչը» կթվայիր, ով «A կետից դեպի B կետը ճանապարհն է բռնել»... Բայց ես վսեմ մտադրություններիդ և ձգտումներիդ հաղորդակից լինելով, գիտեմ, որ հիշատակած օրը՝ արտասովոր արևոտ եղանակով նշանավորված, դու հեծանվորդի ա՛յլ՝ ժամանակի և տարածության մեջ անցողիկ տիպար ներկայացար, որին հատուկ էր շրջապատող իրականության հանդեպ անհաշտելիությունը, երեսպաշտության և կեղծ բարեպաշտության դեմ պայքարում տոկունությունը, անկոտրում կամքը, դրված նպատակին հասնելու գործում հաստատակամությունը, ընկերական հարաբերություններում արտակարգ սկզբունքայնությունն ու ազնվությունը... Դու ոչ միայն և ոչ այնքան հեծանվորդ էիր, որքան՝ հեծանվորդ-անձ, հեծանվորդ-քաղաքացի:»

Հուսով ենք՝ Սաշա Սոկոլովի «Հիմարների դպրոցը» գրքից վերցրած այս կենդանի պատկերը ձեզ օգնեց՝ նոր թեմայի տրամադրվելու: Խնդրե՛ք ձեր երեխային՝ առաջարկվող թեսթի հարցերին պատասխանել հետևյալ կերպ.

«+» նշանով պահանջվում է նշել այն առարկաները, որոնց դասավանդման ժամանակ տվյալ հարցում մատնանշված գործողություններն ուսուցչի կողմից ակնհայտորեն կատարվում են: Իսկ եթե դրական պատասխանը չի համապատասխանում տվյալ առարկայի դասերին, ապա այդ առարկայի անվանման կողքին «-» նշանն է դրվում:

Ո՞ր առարկայի դասերն է լինում այնպես, որ ուսուցիչը (ուսուցչուհին) ...

1) Աշխատում է ավելի շատ հարցնել՝ բացատրություններին համարյա ժամանակ չհատկացնելով:

2) Երբեք չի հարցնում այն, ինչը չի բացատրել և ինչի մասին ոչ մի տեղ հնարավոր չէ կարդալ:

3) Բարյացակամ հարաբերություններ է հաստատում թույլ աշակերտների հետ:

4) Միշտ խրախուսում է, երբ աշակերտը (աշակերտուհին) հանձնարարությունը սեփական եղանակով, յուրօրինակ է կատարել:

5) Դասից հետո չի շտապում հեռանալ և հաճույքով շարունակում է պատասխանել դասի թեմային վերաբերող հարցերին:

6) Դասի ժամանակ մեզ հետաքրքիր է և ամեն ինչ հասկանալի:

7) Որպես կանոն՝ նրան հենց իրե՛ն հետաքրքիր չէ այն, ինչը նա փորձում է մեր «գլուխները մտցնել»:

8) Նա ինձ սիրում է այնպես, ինչպես և բոլոր մնացյալ իմ համադասարանցիներին:

9) Անկարգապահ աշակերտների հետ բարյացակամ հարաբերություններ է հաստատում:

10) Կշտամբում է ու իջեցնում գնահատականը, երբ աշակերտներն «իրենց խոսքերով» են դասը պատասխանում և (կամ) խնդիրը լուծում են ոչ այն եղանակով, որը ցույց էր տրված:

11) Հիմնականում արդարացի է գնահատականները նշանակում:

12) «Անհեթեթ» ոչինչ չի մոգոնում, ինչն առարկան հասկանալուն միայն կխանգարեր:

13) Սովորաբար մեզանից չի պահանջում անգամ այն, ինչը պարտադիր է:

14) Միշտ պահանջում է ասել միայն այն, ինչն ի՛նքն է ճիշտ համարում:

15) Բարյացակամ հարաբերություններ է հաստատում բավարար սովորող աշակերտների հետ:

16) Մենք ընդհանրապես չենք կարողանում հասկանալ, թե ի՛նչ է ուզում նա մեզանից:

17) Առաջադրանքներ է մեզ հանձնարարում հնացած դասագրքերից, որոնք միևնույն ժամանակ ծնողներին անծանոթ են և նրանց մոտ դժգոհություն են առաջացնում:

18) Հաճախ ասում է. «Ես ձեզ վաղը դաս կհարցնեմ, իսկ դուք պետք է պատասխանեք այսպես ... Այլապես՝ ձեզ վատ կլինի»:

19) Երբեք չի ծաղրում ու չի վիրավորում աշակերտներին:

20) Նա լավ գիտի առարկան, բայց չի փորձում ամենագետ ձևանալ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Յուրաքանչյուր առարկայի արդյունքը հաշվե՛ք առանձին: Իմաստավոր պատասխանները, որոնց մեկական նիշ (բալլ) է վերագրվում, դրականներն են («պլյուսները) փակագծով հարցերին՝ 2). 3). 4). 5). 6). 8). 9). 11). 12). 15). 19). 20). և բացասականները («մինուսները)՝ առանց փակագծի հարցերին՝ 1. 7. 10. 13. 14, 16, 17. 18:

Եթե որևէ առարկայի արդյունքը (նիշերի գումարը) գերազանցում է 14-ը ապա դա պարզապես հիանալի է: Այդպիսի մի քանի առարկայի առկայության դեպքում կարելի է վստահ լինել, որ երեխայի բախտը բերել է: Եվ եթե կա 2-3 ուսուցիչ, ովքեր վարում են առարկան այդ մակարդակով, ապա խորհուրդ չենք տալիս երեխային այլ դպրոց կամ այլ դասարան տեղափոխել: Ցանկացած դպրոցում և ցանկացած համակարգի դեպքում՝ տաղանդավոր ուսուցիչները նրանց բոլորի 30%-ից ավելին չեն կազմում: Առկա սոցիալ-տնտեսական իրադրության պայմաններում հենց նրանք էլ ստիպված են մասնավոր դպրոցներ տեղափոխվելու կամ մասնագիտությունը փոխելու:

Երբ շուկան «ամեն ինչ իր տեղը կդնի, ուսումը մասնավոր ուսումնական հաստատություններում երեխաների մեծամասնությանն անմատչելի կլինի: Ուստի օգտվեցեք պահից խնայեցեք այն, ինչից ձեր երեխաները դեռ զրկված չեն: Այն, ինչը բոլորինն էր, ավելի ճիշտ՝ նրանցը, ում «բախտը բերել էր, շուտով մատչելի կմնա միայն լավ ապահովվածներին: Սա է հեռանկարը, որը կարելի է ակնկալել մոտակա 50-70 տարիներին՝ հաշվի առնելով շնորհալի մանկավարժների արտահոսքն այլ ոլորտներ և շրջանավարտ դիմորդների վերակողմնորոշումը բարձր եկամուտներ խոստացող մասնագիտությունների:

Այս ամենը չի նշանակում, թե լավագույն մանկավարժներն այսօր կենտրոնանում են մասնավոր գիմնազիաներում և լիցեյներում: Պարզապես նրանք դուրս են մղվում՝ պետական կրթական համակարգի ֆինանսավորման վերացման հետ: Դաստիարակի ընդունակությունները չեն միահյուսվում ձեռնարկատիրոջ ընդունակություններին, «գործ կազմակերպելուե կարողությանը, գովազդ

կազմակերպելուն և այլն (թեպետ և միմյանց չեն բացառում): Այդ պատճառով էլ կոմերցիոն ուսուցման պայմաններում հնարավոր են նույնպիսի հարակարծություններ (պարադոքսներ), ինչպիսիք առկա են կոմերցիոն առողջապահության համակարգում (վիրահատությունը կատարվում է ոչ թե հիվանդի կյանքը փրկելու անհրաժեշտության համար, այլ՝ որովհետև բժշկին այդ վիրահատությունն ավելի մեծ շահույթ է ընձեռում): Եվ մասնավոր գիմնազիաներում դժվար թե կարելի է ակնկալել, թե այդ նույն 30%-ից ավելի ուսուցիչներ կգտնվեն, ովքեր իրոք ընդունակ են ձեր երեխայի անձը զարգացնելու:

Ամեն կողմից լսում ենք, թե ծնողները պետք է համագործակցեն ուսուցիչների հետ: Դիտարկեք թեսթի արդյունքները, մեկ անգամ ևս զրուցեք երեխայի, Նրա համադասարանցիների հետ, կշռադատեք, խորհեք ու որոշեք, թե ում հատկապես պետք է աջակցել և հատկապես ում հետ՝ համագործակցել ընդդեմ սեփական երեխայի, թե հօգուտ նրա: Արդյոք Նրանց հետ, ովքեր սիրում են երեխային, նվիրել են իրենց կյանքն այն մասնագիտությանը, որը երբեք անձնական հարստացում չի խոստացել ու չի ենթադրել և իր իսկ էությամբ ընդհանրապես չէր կարող (և չի կարող) գրավչություն ներկայացնել ոգով չարչի անձանց համար:

Վեցված է Գործնական «ինքնաճանաչման հանրագիտարան գրքից՝

հրատարակված Մոսկվայում, 1994թ.

Ռուսերենից թարգմանեց՝ Նարինե Իսագուլյանը